

«Հուլիսի կամուրջ»  
հասարակական կազմակերպություն

Գրքույկում զեպտեղված են Երևանում և  
հանրապետության փարբեր մարզերում ապրող  
ծնողների պատմություններ, որոնց երեխաներն  
ունեն հաշմանդամություն, սովորելու  
դժվարություններ կամ այլ հատուկ կարիքներ:

## Ամեն Ինձ լՍԿ է լինելու

(պատմում են ծնողները)



Երևան-2009

## Մոռ Պայքարը ՀնարածնԱկով Է ՊԱՏԿՎՈՒՄ

Վարդուհի Արամյան



Երբ տեղեկանում ես, որ երեխադ խնդիր ունի, հասկանում ես, որ այլևս այլ կերպ ես ապրելու, այլ խնդիրներ են գերակա լինելու քո կյանքում:

Այդպես եղավ, երբ դեռևս ծննդաբանը պայքար սկսվեց զույգ նորածին երեխաներիս համար:

Մեկը հեռացավ: Իսկ մյուսն ապրեց՝ կարծես հաստատվելու համար, որ երբ մայրն իր բոլոր բջիջներով պայքարում է երեխայի կյանքի համար, այդ պայքարը հաղթանակով է պսակվում:

Տղայիս՝ Արտակին ու ինձ երկար ու դժվար ճանապարհ էր սպասում՝ շարունակական բուժում, վիրահատություն, մրավախություններ, անվստահություն, անհամարձակություն, ֆինանսական ու հոգեբանական դժվարություններ. շատ ու շատ փակ դռներ կային այդ ճանապարհին:

Ամենակարևոր քայլն այս ճանապարհին դպրոց գնալու դուռն էր, որ պետք է բացվեր ու Արտակին փաներ դեպի լիարժեք կյանք:

Եվ ոչ միայն Արտակին, այլ նաև ինձ՝ որպես ծնողի: Պարզվեց, որ դպրոցը ոչ միայն երեխաներին է սրտաբաց ընդունում, այլև ծնողներին: Մեր դպրոցում ծնողներն իրենց երեխաների կրթական հարցերով զբաղվող թիմի անդամ են և մասնակից են դառնում նրա խնդիրների լուծմանը:

Դպրոցում գործում էր ծնողական խումբ, ուր ամեն ծնող կարող էր կիսվել, լիցքաթափվել, խորհուրդ հարցնել և իր փորձով օգնել մեկ այլ ծնողի: Մեր ծնողական խմբի համար պարբերաբար կազմակերպվում էին սեմինար հանդիպումներ, որոնցից ես տեղեկացա իմ երեխայի իրավունքների մասին: Աստիճանաբար փոխվեց վերաբերմունքս երեխայիս հաշմանդամության հանդեպ: Դարձա իրազեկված ու լավատեղյակ հաշմանդամության հիմնախնդիրներին:

Օր օրի, հանդիպումից հանդիպում աճելով՝ այսօր կարող եմ արձանագրել մեր ընտանիքի մեծ հաջողությունները. արդեն 6-րդ դասարանում է սովորում փղաս, չնայած իր ֆիզիկական դժվարություններին, ինքնուրույն է հաճախում դպրոց և ինքնադրսևորվում է լիարժեքորեն՝ ոչնչով չտարբերվելով իր հասակակիցներից, իսկ ես մեծ սիրով մասնակցում եմ ծնողական խմբերի կայացման սեմինարներին՝ իմ փոքր լուսման ներդնելով ազգային ծնողական ցանցի սրտեղծման գործում:

## Իմ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՃԻՇՏ ԷՆՆ

Աիդա Սահակյան

«Հուլիսի կամուրջ» ՀԿ-ում ես՝ որպես հաշմանդամ երեխայի մայր, ջերմության զգացի և տեսա դիմացիին հասկանալու պատրաստակամություն: Մինչ այդ մտածում էի, որ եթե ես չլինեմ, երեխաս կկործանվի, բայց վախենում էի դա բարձրաձայնել:

Ես ծանոթացա փարբեր



ծնողական խմբերի հետ, մասնակցեցի սեմինարների: Մի պահ թվում է, թե դա ոչինչ չի տալիս, բայց նրանից, որ դու լիցքաթափվում, հանգստանում, կտրվում ես առօրյա կյանքից: Սակայն դա այդպես չէ, ամեն անգամ ինչ-որ որոշում ընդունելիս, ինչ-որ մի նոր քայլ անելիս զգում ես, որ դա սեմինարների արդյունքն է: Անձամբ ես ստացել եմ մեծ վստահություն, ինքս իմ անձի նկատմամբ դարձել եմ ավելի հարգալից, գնահատող: Նախ՝ տեսա, որ մենակ չեմ: Երկրորդ՝ համոզվեցի, որ իմ կայացրած որոշումները ճիշտ էին (որովհետև աղջիկս արդեն 7 տարեկան էր, ավարտում էր առաջին դասարանը):

Ընդամենը 5 տարի առաջ այս ամենը գոյություն չուներ և հաշմանդամ երեխայի ծնողի համար դժար էր: Իսկ այսօր հուսալի ապաստան ունենք:

### ՀԱՅՈՂՎԵՅ

#### Արմինե Ավագյան



Անսպասելի էր, որ աղջկաս՝ Մերիի հետազոտության արդյունքը լսողության կորուստն էր:

Տարիների ընթացքում շատ մեծ դժվարություններ հաղթահարելով փորձում ենք վերականգնել լսողությունն ու զարգացնել խոսքը: Չնայած Մերին լսողության խնդիր ունի, այնուամենայնիվ, շրջապատի հետ շփումը փորձել ենք լիարժեք դարձնել, որպեսզի նա իրեն վար չզգա և բարդություններով չմեծանա: Հաջողվեց:

Մերին 13 տարեկան է, սովորում է Երևանի 180-րդ միջնակարգ դպրոցում: Դպրոցում լավ ընկերուհիներ ունի և շատ սիրված ուսուցչուհիներ: Շնորհիվ մեր սիրելի դասղեկ Կրիստինե Մելիքյանի՝ ամբողջ դասարանը Մերիի հետ շփվում է ինչպես հավասարը հավասարի, որի համար շատ շնորհակալ եմ: Շնորհակալ եմ նաև տնօրինությանն ու դպրոցի թիմին, որ հոգատար և հերոսողական են: Ներառական կրթության ծրագիրը մեր դպրոցում շատ բան փոխեց:

Սրտեղծվեց ծնողական խումբ: Սկսեցի հաճախակի մասնակցել բոլոր հանդիպումներին և սեմինարներին, որոնք կազմակերպում էր «Հուլիսի կամուրջը»: Իմ մեջ արթնացավ ավելի իմանալու մեծ ցանկություն: Տարբեր դպրոցներում փոխալսելություններից ստացած փորձերը և փոփոխությունները կյանքիս մեջ մեծ փոփոխություններ մտցրեցին: Իմ սիրելի Արմիկի շնորհիվ, ով ծնողական խմբերի համակարգողն է, տեղեկանում ենք այն ամենին, ինչն անհրաժեշտ է: Կազմակերպված բոլոր միջոցառումներին մասնակցում ենք, քանի որ շատ հետաքրքիր են անցնում:

### ԿՕՓԵՄ ՈՐՈՒՄ ՀԱՄԵՂՈՒ ԻՐ ԵՐՁՁԱՆՔՆԵՐԻՆ

#### Աննա Մովսիսյան

Երբ ինձ հայտնեցին առաջնեկ որդուս խնդրի մասին, կյանքս անիմաստ դարձավ: Ապագայի պայծառ երազները մշուշվեցին: Չգիտեի՝ ինչ անել, ո՞ւմ դիմել...

Տարիներն անցան: 2003 թվականն էր, ու որդիս պետք



Է դպրոց հաճախեր: Շատ ծնողների նման ուզում էի «թաքցնել» որդուս հաշմանդամությունը: Չգիտեմ՝ երևի ծնողական հպարտությունս թույլ չէր տալիս, որ որդուս խղճային, կարեկցեին: Բայց, ի վերջո, որոշեցի, որ պետք է հանրակրթական դպրոց հաճախի, ու կտրականապես դեմ էի օժանդակ դպրոցին:

Թեև ներառական կրթության մասին ոչ մի պատկերացում չունեի և գիտակցում էի, թե ինչ դժվարություններ են մեզ սպասում, իմ մեջ համարձակություն գտա և կարևորեցի որդուս ուսումը հանրակրթական դպրոցում:

Մի շարք դժվարություններ հաղթահարեցինք ուսուցիչների և փնտրեցի օգնությամբ: Տղաս սովորեց գրել և կարդալ: Դպրոցում ծագած որոշ խնդիրներ փորձում էինք հաղթահարել համբերաբարությամբ:

Նա ձեռք բերեց ընկերներ, ովքեր օգնում էին նրան:

Տնօրենը միշտ հեղափոխվում էր որդուս ուսման ընթացքով և յուրաքանչյուր ժողովում պահում նրա հաջողությունների մասին՝ ասելով, որ Արայիկի հաջողությունները նաև բոլորիս հաջողությունն են: Ես անչափ ուրախ էի տեսնել որդուս առաջադիմությունը:

Նրա ուսումը, դաստիարակությունը դարձել էին կյանքիս նպատակը: Սակայն շատ հարցերի անորոշությունն ինձ երբեմն ուժասպառ էր անում:

Խուսափում էի դպրոցից, ծնողների հետ շփումից՝ մտածելով, որ ինձ չեն հասկանա, ու ես ինձ շատ միայնակ էի զգում:

Վերջապես եկավ այն օրը, երբ փնտրեցի հայրնեց, որ մեր դպրոցում գործելու է ներառական կրթություն:

Դեռ չէի հասկանում, թե խոսքն ինչի մասին է, և ինչ փոփոխություններ են սպասվում, բայց սրտիս խորքում զգում էի, որ լավ է լինելու:

Ներառական կրթություն շնորհիվ մի շարք բարեփո-

խումներ եղան իմ կյանքում: Կազմվեց անհատական ուսումնական ծրագիր, որը համապատասխանում էր որդուս ընդունակություններին և կարիքներին: Այն մատչելի դարձրեց ուսումը նրա համար: Դպրոցում գործող բազմասնագիտական թիմի հոգաբար վերաբերմունքի և համառ աշխատանքի արդյունքում օրեցօր գրանցվեցին նորանոր հաջողություններ: Դպրոցում անցկացվող մի շարք միջոցառումները, հանդեսները, որդուս նկարների ցուցահանդեսը վստահություն ու լավատեսություն ներշնչեցին ինձ:

Իմ մեջ շատ բան փոխվեց, երբ ես կապ հաստատեցի «Հուլիսի կամուրջ» կազմակերպության հետ: Այսօր ես նոր ծանոթություններ հաստատեցի ծնողների հետ: Ու այդ ժամանակ հասկացա, որ շատ ծնողներ ունեն իմ կարիքը, իսկ ես էլ՝ շատերի կարիքը: Այժմ էլ «Հուլիսի կամուրջի» ծնողական խմբի համակարգող Արմիկի հոգաբարության և բարեխիղճ աշխատանքի շնորհիվ ծնողները հանդիպում և շփվում են միմյանց հետ, քննարկվում բազմաթիվ հարցեր՝ փորձելով գտնել դրանց լուծումը:

Ծնողական խումբը մեծ դեր ունի իմ կյանքում: Ես ձեռք եմ բերել նոր ընկերներ ու վստահում եմ: Փորձի փոխանակման, փոխօգնության և սեփնարների շնորհիվ ինձ հուզող հարցերը պատասխան են գտնում: Եվ ամենակարևորը՝ ես լավ եմ զգում մի միջավայրում, որտեղ ինձ հասկանում են: Ես կարծում եմ, որ ծնողների համագործակցությունը կարող է լուրջ փոփոխություններ մտցնել մեր երեխաների ապագայում:

Այսօր իմ կյանքի իմաստըն է դարձել օգնել ինձ նման ծնողներին, որպեսզի նրանք էլ հաղթահարեն իրենց դժվարությունները:

Իմ տղան այժմ սովորում է 7-րդ դասարանում: Զբաղվում է սպորտով, հաճախում է նկարչության պարասմունքների: Որոշել է մեծ նկարիչ դառնալ:

Ես համոզված եմ, որ իմ համառության և լավատեսության շնորհիվ կօգնեմ որդուս հաղթահարելու բոլոր դժվարությունները և հասնելու իր երազանքներին:

**Ո՞ր ոք այլ սօքո՞վ ջի նայում մեր երեխաներին**  
**Երևանի 100-րդ դպրոցի ծնողական խումբ**



Ներառական կրթությունը կայացել է մեր դպրոցում, որովհետև այսօրեղ աշխատում է կազմակերպված մանկավարժների, հմուտ և գիտակ համակարգողի թիմը, ինչպես նաև դպրոցի փոփոխում, որը մեր բոլորի աջակիցն է ու մեր

երեխաների պաշտպանը:

Ես ուզում եմ նշել մի կարևոր հանգամանք ևս. 100-րդ դպրոցում կա շատ կարևոր մի բան, ոչ ոք այլ աչքով չի նայում մեր երեխաներին, համեմայնդեպս՝ դպրոցի ներսում: Ես կարծում եմ, որ դա մեր փոփոխումն է՝ Տիկին Օհանյանի որդեգրած քաղաքականության շնորհիվ. 100-րդ դպրոցում բոլորը հավասար են:

Մեր քաղաքում շատ շքեղ դպրոցներ կան: Երբ դրսից նայում ես, մտածում ես, որ ներսում էլ է այդպես: Բայց

սխալված չէի լինի, եթե ասեի, որ ոչ միշտ է այդպես: Ծքեղությունը դեռ չի նշանակում, որ դպրոցը լավն է:

Կարող է ներս մտնես և տիրող մարդկային սառնությունից ու անտարբերությունից հիասթափվես: Ես նորից ուզում եմ նշել, որ 100-րդ դպրոցը ներառական կրթություն ստացող երեխաների համար արևի, ջերմության և հույսի կրթօջախ է:

Ասեմ, որ մեր դպրոցում կազմակերպվում են միջոցառումներ, որոնց մասնակցում են հավասարապես բոլոր երեխաները: Պարբերաբար փոփոխվող հրավիրում է ժողովներ և մեզ հետ քննարկում այն բոլոր հարցերը, որոնք կարող են մեզ անհանգստացնել: Ես ուզում եմ առիթից օգտվել և իմ ու մյուս ծնողների անունից խորին և մեծ շնորհակալություն հայտնել դպրոցի փոփոխությանը, մեր ներառական թիմին և մեր հրաշալի դասավարներին՝ իրենց համբերատարության և անշահախնդիր աշխատանքի համար:

**Մեծ գործը մենակ ջեն անում**  
**Արմինե Սահակյան**

Մի օր մեր փուն զանգահարեց հաճելի ձայնով մի աղջիկ և ասաց, որ երևանում գործում է «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը, որտեղ հատուկ մանկավարժը, լոգոպեդը և արտաբերապիստը զբաղվում են կրթական հատուկ կարիք ունեցող երեխաների հետ: Ինձ առաջարկեցին այցելել և ծանոթանալ:



Առաջարկն ինձ շատ հետաքրքիր թվաց, բայց ամեն մի նոր բան իր հետ անհանգստություն է բերում: Քանի որ ես ու որդիս՝ Հրաչյան, արդեն ընդգրկվել էինք մեկ այլ ծրագրում, ես անընդհատ հետաձգում էի այցս «Հույսի կամուրջ»: Մտածում էի, որ նոր շրջապատ, նոր մարդիկ, ու դու քո պրոբլեմով. արդյո՞ք կհասկանան:

Բայց մի քանի շփումից արդեն պարզ դարձավ, որ գործ ունեն իրենց գործը լավ իմացող մարդկանց հետ, ովքեր քեզ խորհուրդներ կտան իրենց իսկ կյանքի փորձից: Բարեհամբույր և հաճելի մթնոլորտը բերեց նրան, որ մենք արդեն երրորդ փարին է, ինչ հաճախում ենք «Հույսի կամուրջ»:

Ծանոթացա Արմիկի հետ, ով ծնողներին համախմբող օղակն է: Ծափ բան սովորեցի հենց նրանից: Ամփջական գրույցների, խորհուրդների արդյունքում քեզ ավելի վստահ ես գգում, հասկանում ես, որ միայնակ չես: Դա է պարձառը, որ շատ եմ կարևորում ծնողական խմբերի գոյությունը: Ծնողների միմյանց հետ շփումը, փորձի փոխանակումը շատ բան են սովորեցրել ինձ:

Մեզ ինքնավստահ և ուժեղ են դարձնում նաև սեմինարները, որոնք կազմակերպվել էին «Հույսի կամուրջի» կողմից: Տարբեր հանդիպում-քննարկումներն օգնեցին ինձ շատ հարցերի այլ տեսանկյունից նայել:

Դպրոցներից մեկում մասնակցեցի նաև ծնողական հավաքի, որի ժամանակ էլ որոշեցի մինչև նոր ուսումնական փարվա սկիզբը երեխայիս հետ շաբաթական մեկ օր դպրոց հաճախել, մինչև նա ընկերանա միջավայրին, և մասնագետներն էլ ժամանակ ունենան ավելի լավ ճանաչել նրա կարիքները:

Ճիշտ է՝ մրավախություն կար, բայց մյուս ծնողների և «Հույսի կամուրջի» աշխատակիցների խորհուրդները լսելով՝ հույսով լցվեցի և մտածում էի, որ ամեն ինչ լավ կլի-

նի, քանի որ կազմակերպության կապը ներառական կրթության դպրոցների հետ շարունակական է:



Եկավ սեպտեմբերը... Ես և ամուսինս, չափազանց հուզված, անհանգստությունը սրտներումս՝ մեր որդու ձեռքը բռնած՝ զնայինք Երևանի 17-րդ ներառական դպրոց: Հրաչյան այնքան գեղեցիկ էր՝ սպիտակ վերնաշապիկով, դպրոցական պայուսակով և մի ծաղկեփունջ էլ ձեռքին. նա ոչնչով չէր փարբերվում այն երեխաներից, որոնց ծնողներն ավելի վստահ էին բերել դպրոց: Հենց դպրոցի բակում ամուսնուս խնդրեցի լուսանկարել նրան, որովհետև դեռ չգիտեի՝ կընդունվի՞ արդյոք հասակակիցների, մանկավարժների և ծնողների կողմից, կունենա՞ մեր պատմությունը շարունակություն դառնույն. գոնե մի լուսանկար մնար սեպտեմբերի 1-ից:

Մի բան է, երբ երեխադ ընդունվում է մասնագետների կողմից, և մի այլ բան է, երբ նրան հասկանում ու սիրում են նրանք, ովքեր այնքան էլ չեն շփվել հաշմանդամ մարդկանց հետ:

Հուրախություն ինձ՝ տղայիս սիրեցին և նրա դասընկերները, և դասղեկը, և ծնողները: Մեզ հասկացան, ընդունեցին: Տղաս շատ սիրեց իր դասղեկին՝ փիկին Ծամիրյանին, ով գարմանալիորեն հասկանում է նրան:

Ծափ ակտիվ լինելով հանդերձ՝ նա նստում է դասերին, մասնակցում դասապրոցեսին, և հնարավորինս առաջ գնում ուսման մեջ: Ծափ է սիրում նաև փնտրեմին՝ փիկին Ազիզյանին, և շատ ամփջական է շփվում նրա հետ: Կան հափուկ մասնագետներ, որոնց աշխատանքը քիչ

կարևոր չէ: Իմ պատմությունը կարդալիս կթվա, թե ոչ մի խնդիր չկա, ամեն ինչ ընթանում է հարթ ու անխոչընդոտ: Բայց այդպես չէ:

Եթե որևէ մեկը երբևէ ասի, թե ամեն ինչ շարք հեշտ է, մանավանդ ներառական կրթության հարցում, թույլ տվեք չհամաձայնել: Լինում են նաև խոչընդոտներ, նաև թերություններ, բայց իմ բախտը բերել է մի բանում. ես հայտնվել եմ այնպիսի կոլեկտիվում, որտեղ խնդիրներից ոչ թե խուսափում են, թերությունները ծածկում, այլ աշխատում են լուծում գտնելով առաջ գնալ, հասկանալ, թե ո՞րն է ավելի ճիշտ:

Հենց տնօրենը՝ Մանյակ Ազիզյանն ինքն է սրտացավ մտքեմում ցանկացած հարցի, և դրանով ամեն ինչ ասված է: Այսօր արդեն փողաս սովորում է Երևանի 17-րդ դպրոցում:

Ինձ համար մեծ հաջողություն է, որ փոլայիս ճանաչած փառերի թվին ավելանում է ևս մի քանի փառ, կարողանում է ինքնուրույն գրել 1 թիվը, անգիրներ ասել, երբ հաճույքով մասնակցում է երգի և աշխատանքի ուսուցման դասերին:

Ունենք նաև դեռ չհաղթահարված դժվարություններ, բայց համոզված եմ, որ դրանք էլ կհաղթահարենք, քանի որ երեխայիս հաջողությունների համար ուրախանում ենք միասին՝ ես՝ որպես մայր, ընկեր Շամիրյանը՝ Հրաչյայի կյանքում ամենակարևոր և ամենասիրելի ուսուցչուհին, հարուկ մանկավարժն ու հոգեբանը՝ մի մեծ թիմ, որտեղ ամեն մեկս մեր կարևոր տեղն ու դերն ունենք: Եվ, իհարկե, մեր սիրելի տնօրեն ընկեր Ազիզյանը, ով անձամբ է հեղափոխվում ամեն մի երեխայով, և դա շարք պարտավորեցնում է ավելի սրտացավ և եռանդուն աշխատանքի: Եվ չեմ կարող չհնչել ամենակարևոր ձեռքբերումը՝ Հրաչյան արդեն ունի շարք ընկերներ:

Բացի Հրաչյայի հաջողություններից, ևս մի նորություն է ավելացել մեր դպրոցական առօրյայում: Մեր տնօրենը ծնողներին հարկապարհ է մի լուսավոր ու գեղեցիկ սենյակ, և մեր ծնողական խումբն ավելի է մտերմացել: Մեր սենյակում, բացի այն, որ կարող ենք գրուցել մեր խնդիրների մասին, ավելի լավ ծանոթանալ միմյանց, կիսվել մեր փորձով, նաև կազմակերպում ենք հանդիպումներ հոգեբանի հետ, անցկացնում ենք քննարկումներ մեր նախընտրած թեմայի շուրջ, պարտաստում ենք պարի թերթեր տարբեր թեմաներով՝ այդպիսով մեր մասնակցությունն ունենալով դպրոցում կազմակերպվող միջոցառումներին:

Մի խոսքով՝ ծնողների օրը դպրոցում անցնում է ավելի բովանդակալից: Այցելում ենք նաև ուրիշ դպրոցներ, ծանոթանում մյուս ծնողական խմբերի հետ, աշխատում ենք ամրապնդել մեր կապերը, հարկ եղած դեպքում օգնում ենք միմյանց: Եվ քանի որ «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ծնողների համար, ստացած ինֆորմացիան պատմում ենք մյուս ծնողներին, քանի որ տեղեկացված լինելն այսօրվա մեր իրականության կարևոր նախապայմանն է:

Շարք եմ կարևորում ծնողների համագործակցությունը, և սրանք զուր խոսքեր չեն: Երբ ինձ որևէ տեղեկություն է պետք այս կամ այն հարցի վերաբերյալ, ես կարող եմ դիմել մեկ այլ ծնողական խմբի ծնողի, և նա մեծ հաճույքով ինձ կօգնի: Ես էլ իմ հերթին եմ օգնում մեկ ուրիշին և այսպես շարունակ:

Եվ երբ տեսնում եմ մի մայրիկի, ով նոր է եկել դպրոց և դեռ չգիտի, թե ինչպես ամեն ինչ կընթանա, կընդունե՞մ արդյոք իր երեխային այնպիսին, ինչպիսին որ նա կա, ես նրան վստահորեն ասում եմ, որ ճիշտ տեղում է, որ ամեն ինչ լավ է լինելու, որ նա մենակ չէ: Չէ՞ որ երկու փարի առաջ ես էլ նույն մտածվածությունն ունեմ: Իսկ հիմա ես

ուներ հաջողված պատմություն և, որ ավելի կարևոր է, հաջողված պատմության շարունակություն:

Ինչպես ասում են՝ «Մեծ գործը մենակ չեն անում»: Որպեսզի հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաները երջանիկ լինեն, պետք է հասարակության լավ վերաբերմունք, լավ դպրոց և ամուր ընտանիք:

## ԵՐՁՁԱՆՔԱՆ ԱՆԻՐԱԿԱՆԱՆԱԼԻ ԳԻՐ

### Մարգարիտա Մետրոպոլիտ



Որդիս՝ Արսենը, ծնվել է 1999 թ. Երևանում: Հաճախել է Երևանի 131-րդ մանկապարտեզ, որտեղ մեծ դժվարությամբ էր գնում: Չէր լսում դայակներին, դասարակներին: Անընդհատ գրկումս էի պահում նրան, իր ձեռքով չէր կարողանում

նույնիսկ գդալ բռնել, քայլել, չէր խոսում:

Շատ ագրեսիվ էր: Անընդհատ լալիս էր, ինչ փալիս էիր՝ վայր էր գցում: Չէր մնում ոչ մեկի մոտ:

Ես հույս չունեի, որ երեխաս ոտքի կկանգնի, կխոսի, կկարողանա սովորել: Երեխաների հետ շփվելու համար ես հաճախ էի նրան փանում խաղահրապարակ, կենդանաբանական այգի: Մեծ սիրով հետևում էր ամեն ինչին և հաճախ հարցեր փալիս: Սիրում էր այգի գնալ, երեխաների հետ խաղալ, մեծ սիրով հյուրասիրում էր նրանց:

8 փարեկան էր, երբ նրան ընդունեցինք Երևանի 17-րդ ներառական դպրոց: Ընդունվելուց հետո խնդիրներն էլ

ավելի բարդացան, որովհետև մենք հասարակության ավելի լայն շերտերի հետ էինք շփվում: Ուսուցիչների, փնտրիչների և բազմամասնագիտական թիմի հետ մշակեցինք աշխարհանքի «ռազմավարություն»: Մեր ջանքերի շնորհիվ Արսենը կարողացավ ներառվել և շփվել հասակակիցների հետ:

Եղել են հուսահատության և հիասթափության շաղպահեր, ապագայի հանդեպ դյուրահավատություն: Երկար և հաճախակի զրույցում էի դպրոցի մասնագիտական թիմի անդամների հետ: Պարտահում էր՝ Արսենի համար վիճում էինք: Սակայն իրենց գործը լավ իմացող մանկավարժների արդյունավետ խորհուրդների շնորհիվ սկսեցի հավատալ, որ մի օր էլ իմ երեխան մյուսների նման կարող է հաճախել դպրոց, մինչև վերջ հանգիստ նստել և պատասխանել դասերը:

Պարզվեց՝ իմ սպասելիքներն այնքան էլ հեռավոր ապագայում չէին, և երազանքս էլ անհրականանալի չէր:

Անհատական պարապմունքներից հետո Արսենը սկսեց սիրել դասերը, դրանց արդեն մասնակցում էր ամբողջությամբ:

Սակայն մեկ այլ դժվարություն ևս ունեի: Տանը սկսում էին երկարապարս վեճեր. ինձ նախապում էին որդուս դպրոց փանելու համար. «Միևնույն է՝ ոչինչ չի սովորելու»: Անգամ ամուսինս էր ասում. «Մի՛ սփիպիր երեխային գրել-կարդալ»: Սակայն ես ինձ հանգիստ չէի զգում: Ամեն ինչի դիմանում էի, որ որդիս գրել-կարդալ սովորեր:

Ձանք չխնայեցի, ամեն քայլի դիմեցի, որ նա համոզվի և սկսի սովորել: Բացի հայերենից, ինձ հաջողվեց նրան նաև ռուսերեն սովորեցնել:

Տանը նրա համար հեքիաթներ էի կարդում և ամեն օր նրան փանում էի գրադարան, որտեղ ինքն էր հեքիաթները պատմում:



Շնորհիվ ուսուցչուհիների ջանքերի՝ անհատական պարամունքներից հետո Արսենը սկսեց հաշտվել դպրոցի հետ: Նույնիսկ ուսման մեջ սկսեց հաջողությունների հասնել: Այժմ երեխաների հետ ընկերություն է անում, միշտ ցանկանում է շփվել: Դասերին միշտ պատրաստ է ներկայանում, սիրում է բոլոր ուսուցչուհիներին, լսում է մեզ՝ ծնողներին:

Այլևս ոչ մի ագրեսիվություն չունի թե՛ շրջապատում և թե՛ տանը:

Երկար ջանքերից հետո ես՝ որպես ծնող, հասա մեծ հաջողությունների, որի համար հպրկապես շնորհակալ եմ Երևանի 17-րդ ներառական դպրոցի մանկավարժներին և տնօրինությանը:

### Իմ ՀՈՒՅՍԻ ԼՈՒՅԱԸ

#### Վարդուհի Հովհաննիսյան



Տխուր նախաբանով պիտի սկսեմ իմ պատմությունը: Այն, ինչ գրելու եմ, իմ երկար փնտրությունների ու անցած դժվար ճանապարհի պատմությունն է: Այն, ինչ գրելու եմ, ուզում եմ համարել խնդրանքի նուրբ այն ծնողներին, որոնք հատուկ կարիքով երեխա ունեն, բայց թաքցնում են իրենց խնդիրները մարդկանցից, որոնք պատրաստ են օգնելու:

Ամեն ինչ սկսվեց 2005 թ. ձմռանը: Փետրվար ամիսն էր, ամեն օրվա պես մենք ընտանիքի անդամներով հավաքվել էինք հյուրասենյակում և հեռուստապրոյեկտ էինք դիտում: Աղջիկս՝ Լիանան, նստած էր բազմոցին և խաղում

եր փուչիկով, ու հանկարծ զգացինք, որ երեխան գիտակցության կորուստ ունեցավ: Այդ ժամանակ Լիանան հինգ տարեկան էր, և դժվար թե պարկերացներ, թե ինչ է կատարվում իր հետ: Ես փորձեցի երեխային արագ դուրս բերել այդ վիճակից: Ամեն ինչ կատարվեց շատ արագ, և մենք չպարկերացրինք, որ այդ ցնցումները կլինեն շարունակական, և ես երևույթը վերագրեցի փուչիկ փչելու երեխայի փորձին:

Ես բուժքույր եմ, աշխատանքի տարիներին շատ էի հանդիպել նման երևույթների, բայց երբեք չէի սպասում, որ իմ երեխան կլինի այն բազմաթիվ երեխաներից մեկը, ով կունենա «Էպիլեպսիա» կոչվող հիվանդությունը: Ես այն մայրերից մեկը եղա, որ իր կամքից անկախ հայրնվեց մի իրավիճակում, որը երբեք չէի սպասել: Երեխայի երկրորդ ցնցումը երկար սպասել չտվեց: Երեք ամիս անց երեխան ունեցավ երկրորդ ցնցումը, ինչը մեզ լուրջ մտածելու տեղիք տվեց: Ես և ամուսինս դիմեցինք բժշկի: Երեխան հերթագրվեց «Արաբկիր» բժշկական կենտրոնում: Բժիշկների կատարած հետազոտություններից հետո մեր երեխայի մոտ հայրնաբերեցին բարորակ էպիլեպսիա հիվանդությունը:

Ավելորդ եմ համարում նկարագրել իմ և ամուսնուս հոգեվիճակը, մեր ապրած ցավը: Մենք գիտակցում էինք, թե ինչ վիճակում էինք հայրնվել և թե մեզ ինչ է սպասում: Մենք հասկացանք՝ մեզնից շատ բան է կախված մեր երեխայի վիճակը բարելավելու համար:

Ընդունեցինք մեր բժշկուհու նշանակած բուժումը, սակայն սկզբնական շրջանում այն չտվեց ցանկալի արդյունք: Մենք չհուսահարվեցինք: Մեր հարազատների ֆինանսական օգնության շնորհիվ երեխան անցավ գլխուղեղի հետազոտություն «Նաիրի» բժշկական կենտրոնում:

Աստժոն օրինությամբ հետազոտության արդյունքները

բազասական էին: Դա մեզ համար կարևոր հաջողություն էր: Այդ հեղափոխության պատասխանից էր կախված սպասվող վիրահատության ելքը:

2007 թ. վիրահատությունը բարեհաջող անցավ: Բայց չվերջացան մեր փանջանքները: Մեզ մտահոգում էր երեխայի ուսման հարցը: Մեկ փարի նրան ուղարկելով Երևանի 130-րդ դպրոց՝ ես հասկացա, որ երեխաս մտավոր զարգացման խնդիրներ ունի, և որ այդ դպրոցում նա երկար չի կարող շարունակել: Սկսվեցին երեխայիս համար հարմար դպրոց գտնելու իմ փնտրտուքները:

Այդքան փարի ապրելով քաղաքում՝ ես չգիտեի, որ մեզ մոտ կան այնպիսի կազմակերպություններ, որոնք օգնում են խնդիր ունեցող երեխաներին: Իմ մտերիմ ընկերուհին ասաց, որ Հայաստանում կան դպրոցներ, որոնք ունեն հատուկ ծրագիր նման երեխաների համար և պատրաստ են օգնելու նրանց: Եվ ահա մի օր, երջանիկ պատահականությամբ, ես հեռուստացույցով տեսա մի հաղորդում, որը պարմում էր «Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպության աշխատանքների մասին: Ես ինձ չկորցնելով՝ վերցրեցի գրիչը և գրեցի կազմակերպության անունը: Իմ ստացած ինֆորմացիան ինձ այնքան էր հուզել, որ ես չէի համբերում տեսնել այն օրը, երբ մենք կհանդիպենք կազմակերպության աշխատակցի հետ:

Ամուսինս զանգահարեց «Հուլիսի կամուրջ», խոսեց մասնագետի հետ, պարմեց մեր խնդիրների մասին, և նրանք մեզ հրավիրեցին իրենց մոտ: Շատ սպասված օրը մոտեցավ, և մենք հանդիպեցինք Շուշանի հետ: Բարի և համեստ, կապուրաչյա, գեղեցիկ ժպիտը դեմքին այդ աղջիկը դարձավ մեր հուլիսի շողը, այն շղթան ու կապող օղակը, որի օգնությամբ մենք գտանք մեր երեխայի համար առավել հարմար դպրոց:

Աղջիկս սկսեց հաճախել Երևանի 100-րդ ներառական

դպրոց, որը ջերմ ընդունելություն ցուցաբերեց և աջակցեց իմ երեխային:


Հիմա իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում 100-րդ դպրոցի փնտրողությանը և «Հուլիսի կամուրջ» կազմակերպությանը: Թող ձեր դռները միշտ բաց լինեն այն երեխաների առջև, որոնք ունեն ձեր կարիքը:

Ձեր կատարած աշխատանքները լինեն շարունակական և բեղմնավոր, թող ձեզնից ճառագող հուլիսի լույսը երբեք չխամրի, և այդ լույսը ջերմացնի այն երեխաներին, որոնք ունեն լիարժեք ապրելու, սրտեղծագործելու, կրթվելու և մյուսներից չփարբերվելու իրավունք:

### ՎԱՋԱԳԱՆԸ ԴՊՐՈՑ Է ԳՆՈՒՄ

#### Գայանե Մանթաշյան

Որդիս՝ Վաչագան Առաքելյանը, ծնվել է 1999 թ. հունիսի 22-ին: Նա դեռ չի քայլում, սովորում է Գավառի 1-ին հատուկ դպրոցում: Վաչագանն իմ ավագ որդին է, ունեն ևս երկու երեխա՝ փղա և աղջիկ: Տղաս մինչև հատուկ դպրոց գնալը ոչինչ չէր կարողանում անել, նա ագրեսիվ էր, չէր ենթարկվում ոչ ոքի:



2006 թվականն էր: Նրան փարանք մեր գյուղի դպրոց, բայց ընադամենը 15 օր կարողացա փանել, որովհետև գյուղի մի ծայրից մյուսը հնարավոր չէր գրկած հասցնել դպրոց: Անցավ մեկ փարի: Երբ մեր փան մյուս երեխաները պեղք է դպրոց գնային, նա այնքան լաց եղավ, որ ինքը չի

գնալու: 2007 թ. սեպտեմբերի 4-ն էր՝ ամուսնուս ծննդյան օրը. մեր փունն այցելեցին Գավառի 1-ին հափուկ դպրոցից: Երբ նրանք ներս մտան, որդիս ուրախացած ասաց.

- Աստված իմ ձայնը լսեց և նրանց ուղարկեց մեր փունն:

Ես, մայրը լինելով՝ չկարողացա հուզմունքս թաքցնել և արտասովեցի: Մենք ապրում ենք բազմամղամ ընտանիքում: Հիմա զգում եմ որդուս մեջ կատարված փոփոխությունները դպրոց հաճախելուց հետո:

Ես զգալով ողջ անձնակազմի ջերմ վերաբերմունքը՝ շար շնորհակալ եմ նրանցից, որովհետև հուսահատության մեջ էի՝ չպարկերացնելով, որ երեխայիս մոտ այդքան առաջխաղացում կլինի:

Նա արդեն կարողանում է գրել և կարդալ, ու այդ բոլորը՝ ուսուցչուհիների ջանքերի շնորհիվ:

Դպրոցի փնտրեն Լավրիկ Արևշարյանը մեծահոգի, բարեսիրտ մարդ լինելով՝ շար ջանքեր գործադրեց Վաչագանին ուղքի հանելու համար: Նա 2008 թ. փետրվարի 21-ին ուղարկեց վիրահատության, ճիշտ է՝ դեռ չի քայլում, բայց ես նրա մոտ փեսնում եմ մեծ առաջխաղացում: Վաչագանը շար է սիրում իր փնտրենին և ուսուցիչներին: Նրանց մասին խոսելիս սիրով է ներկայացնում դպրոցում եղած դեպքերը: Խորին շնորհակալություն եմ հայտնում փնտրեն ընկեր Արևշարյանին հոգատարության և բարի մարդ լինելու համար, իսկ համբերության համար շնորհակալ եմ բոլորը ուսուցչուհիներին՝ ողջ անձնակազմին:

## Արդյունքն ԱԿՆՆԱՅՏ Է

### Սվեդա Մարտիրոսյան

Ես ուրախությամբ ու երախտագիտությամբ եմ հիշում այն օրը, երբ աղջկաս ձեռքը բռնած մտա «Հուլիսի կամուրջի» նորաբաց շենքը: Աշխատակազմի հոգատար և ուշադիր վերաբերմունքից ավելի ոգևորված՝ սկսեցինք պարբերաբար այցելել «Հուլիսի կամուրջ»:

Հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաների անմիջական շփումը, միասին նկարելը, երգելը, խաղալը դրական արդյունք տվեցին: Աննան սկզբում խուսափում էր բակ իջնել, երեխաների հետ խաղալ, ժամանակն ավելի շար փանն էր անցկացնում:

«Հուլիսի կամուրջ» ՀԿ-ում նա սկսեց իրեն ավելի ազատ, վստահ զգալ, շփվել հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաների հետ, ընկերներ ձեռք բերել: Հարկավոր էր փեսնել և զգալ հաշմանդամ երեխաների հրճվանքը, երբ մարզադահլիճում մասնակցում էին մարզական խաղերի:

Ես՝ որպես մայր, իմ սփոփանքը գտա այստեղ: Շփվելով բազմաթիվ ծնողների հետ՝ փեսա, որ մենակ չեմ: Ծնողական խումբն ինձ օգնեց մոռանալու բոլոր այն բարդությունների մասին, որոնք երկար տարիներ խանգարել էին լիարժեք կյանքով ապրել: Խորհրդատվական ծառայության կազմակերպած սեմինարները՝ իրավական, սոցիալական և առողջապահության թեմաներով, բարձրացրին իմ իրազեկությունը: Ծնողական խմբերի սեմինարները և լիցքաթափում, և օգնում էին ցանկացած ծնողի իրենց երեխայի խնդիրն ուրիշ աչքով նայել:

Արդյունքը ամեն փեսանկյունից ակնհայտ է: Աղջիկս՝ Աննան, ամբողջությամբ սոցիալականացված է շրջապատին, իսկ ես երազել իսկ չէի կարող նման մեծ արդյունքի մասին:

## Իմ ստաբիլությունը

### Մարգարիտա Սեդրակյան



Այսօր կարող եմ խոսել իմ պատմության մասին, որը համարում եմ հաջողված: Տարիներ առաջ, երբ տղա դպրոց գնալու նախաշեմին եր, ես անելանելի վիճակում էի:

Իմ ընդամենին փոփոխում էր հարցերի մի շարք, մենք չէինք կողմնորոշվում, թե որտեղ ենք դիմելու և ինչի՞նչ ենք սկսելու:

Մեզ պոլիկլինիկայում ասում էին, որ ամեն ինչ կարգին է և անհանգստանալու կարիք չկա, իսկ ես տեսնում էի, որ երեխան խնդիր ունի: Մեր իրականության մեջ ծանոթ իրավիճակում էի հայտնվել ու մնալու էի մենակ իմ խնդիրների հետ:

Սակայն, երբ հստակ որոշեցի տղայիս փոխել Արմավիրի 1-ին հատուկ դպրոց (չնայած դժվար էի համակերպվում այդ մրքին), շատ կարճ ժամանակ անց ինձ համար պարզ դարձավ, որ ճիշտ որոշում էի կայացրել: Առաջին անգամ այնպեղ իմացա, որ տղայիս անհրաժեշտ է բազմամասնագիտական բժշկական զննում, որը կպարզի նրա ախտորոշումը և հնարավորություն կտա ստանալու հաշմանդամությունը հաստատող փաստաթուղթ: Դպրոցում իրականացվում էր «Խճանկար» ծրագիրը՝ «Առաքելություն Արևելք» կազմակերպության կողմից, և ես ակտիվ մասնակցություն ունեցա դպրոցի ծնողական խմբի մեջ:

Շարունակ հանդիպումներ էին կազմակերպվում «Առաքելություն Արևելք», «Հուլիսի կամուրջ» կազմակերպու-

թյունների ներկայացուցիչների հետ, որտեղ տեղեկանում էի հատուկ խնդիրներով երեխաների խնամքի, բժշկական կենտրոնների, իրավունքների պաշտպանության, օրենքների փոփոխությունների մասին: Այս ամենն ինձ հնարավորություն տվեց այլ կերպ նայելու խնդրին և շփվելու նույն խնդիրն ունեցող ծնողների հետ: Մենք՝ ակտիվ ծնողներս, մասնակցեցինք բազմաթիվ սեմինարների, շփվեցինք կայացած ծնողական խմբերի հետ, դարձանք իրազեկ:

2006-ին Արմավիրում մեկնարկեց «Կյանքի առողջ սկիզբ» ծրագիրը, և ես ընդգրկվեցի ծրագրում՝ որպես համայնքի պատասխանատու: Այս տարիների ընթացքում աշխատեցի 11 համայնքների ծնողական խմբերի հետ՝ փորձելով նրանց իրազեկել և համախմբել ընդհանուր գաղափարի շուրջը: Այժմ որպես կամավոր իմ առաքելությունն եմ կատարում շարունակելով աշխատանքս այս ոլորտում և համակարգում եմ Մեծամորի ցերեկային կենտրոնը:

Այսպեղ ունենք ծնողական սենյակ, որտեղ իրականացվում է արհեստագործական խմբակի գաղափարը, ստեղծում ենք ձեռքի աշխատանքներ, որոնք հանվում են ցուցահանդես-վաճառքի և ստացված գումարով ձեռք ենք բերում նոր պարագաներ, որը հնարավորություն է տալիս մի փոքր կտրվելու առօրյա հոգսերից և ապահովում է կենտրոնի շարունակական գործունեությունը թե՛ ծնողների ակտիվացմանը և թե՛ հատուկ խնդիրներով երեխաների ինտեգրմանը հասարակության մեջ: Ներկայումս կենտրոնն ունի մեկ հասարակ, սակայն հույս ունենք, որ մեր աշխատանքները արդյունք կտան, և հաջողված կենտրոնները կարժանանան համայնքի ուշադրությանն ու աջակցությանը:

Ես շատ շնորհակալ եմ այն մարդկանց, ովքեր եղել են իմ կողքին, կարողացել են փոխել իմ պատկերացումներն այս խնդրի շուրջ, այս ամենը համարում եմ ջերմ վե-

րաբերմունքի, հոգաբարության և հանդուրժողականության արդյունք: Ուստի կոչ են անում. սիրելի՛ ծնողներ, եկեք լինենք ակտիվ, փեղեկացված, համբերաբար և նախաձեռնող, որպեսզի կարողանանք մեր երեխաների համար ապահովել լայն հնարավորություններ՝ հասարակություն ներառվելու համար:

### ՊԱՐԶԱՊԵՆ ԿԵՆՍԱԿԵՐՊ

«Հուլիսի կամուրջ» ՀԿ Իջևանի մասնաճյուղի մի խումբ ծնողներ



Աստված մեզ ձեռքեր է փալիս, բայց կամուրջներ չի կառուցում: Այսօր «Հուլիսի կամուրջ» ՀԿ Իջևանի մասնաճյուղում հավաքված բոլոր մարդիկ իրենց մեջ կրում են մի մեծ առաքելություն, որ դարձել է սեփական ապրելակերպ և կենսաձև: Մենք՝ յուրաքանչյուրս,

համոզված ենք, որ ուժեղ ենք յուրովի, քանի որ մենակ չենք և գիտենք մեր իրավունքներն ու կարող ենք պաշտպանել մեզ: Եվ այն փոխաջակցությունն ու վստահությունը, որ կամրջում է բոլորիս, մեզ ուժ ու եռանդ են փալիս:

«Հուլիսի կամուրջը» այն կապող միջոցն է, որով հաշմանդամ երեխան մտնում է հասարակություն և ընդունվում է այնպիսին, ինչպիսին կա:

Մեր կազմակերպության շնորհիվ մենք՝ ծնողներս էլ սկսեցինք ձանաչել մեր երեխաներին, նրանց ուժեղ կողմերը,

հնարավորություններն ու կարողությունները: Հաշմանդամ երեխաներին իր օգնության ձեռքը մեկնեց «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ն, որն իր գործունեությամբ նպաստեց մեկուսացումից հանելու հաշմանդամ երեխաներին և նրանց ծնողներին, վերացնելու բոլոր ներքին և արտաքին խոչընդոտները, որոնք խանգարում էին հաշմանդամ երեխաներին ներգրավվելու հասարակության մեջ և ստեղծում հնարավորություններ հաշմանդամ և ոչ հաշմանդամ երեխաների համատեղ ուսուցման, կրթության և դաստիարակության համար: Լիարժեք աշխատանք էր պետք, որ փոխվեր հասարակության և, իհարկե, ծնողների վերաբերմունքը:

«Հուլիսի կամուրջն» իր աշխատանքն սկսեց Կոնստանտնուպոլիսում, ծնողների հետ զրույցներով: Յուրաքանչյուրս ունեինք մեր մոտեցումը այդ հարցի վերաբերյալ:

Ծնողական հավաքները, սեմինարները օգնեցին մեր մեջ կամայ-կամայ փշրել անվստահության զգացումը: Ես վստահ էի և հավատում էի, որ սա Աստուծո բարի գործերից մեկն է, որ փարիներ շարունակ անուշադրության մատնված հասարակության այս փոքրիկ մասն արդեն կարող է լիարժեք զգալ իրեն, սիրելի և ընդունելի:

«Հուլիսի կամուրջի» ծրագրերն արժևորվում են հատկապես իրենց արդյունքներով, որոնք որակապես փոխել և շարունակում են փոխել բազմաթիվ երեխաների և նրանց ծնողների կյանքը: Ուշադրության, փոխօգնության, վստահության, հոգաբարության շրջանակներն օր օրի, փարեց-փարի ընդլայնվեցին, և նրանցում ընդգրկվեցին այլ Կոնստանտնուպոլիսի կազմակերպություններ և, որ ամենակարևորն է, դպրոցներ, որտեղ այսօր հաշմանդամ երեխան հնարավորություն ունի սովորելու իր հասակակցի հետ:

Եթե փարիներ առաջ Իջևան քաղաքում կային շարժումներ, որ չէին պարկերացնում իրենց երեխային հանրակրթական դպրոցում, ապա այսօր նման մտավախու-

թյուն գոյություն չունի: Այսօր մեր երեխաներն առավել պաշտպանված են, որովհետև մենք գիտենք մեր իրավունքները: Կարևոր է գիտակցել փոխօգնության խմբի առաքելությունը, քանի որ դժվար է մենակ հաղթահարել շար խոչընդոտներ, իսկ երբ կողքիդ կա մեկը, ում հետ զրուցում, կիսվում ես, ով նա կրում է նույն բեռը և լավ է հասկանում քեզ, ավելի հեշտությամբ ես հաղթահարում հոգեբանական և ֆիզիկական դժվարությունները:

Մենք՝ հաշմանդամ երեխաների ծնողներս, համոզված ենք, որ մեր համախմբված աշխատանքի շնորհիվ ոչ մի հաշմանդամ երեխա դուրս չի մնա հասարակությունից:

### **ՂԱՎԻԹԸ ՀԻՄՆ ԵՐԶՆՆԻԿ Է** **Լիանա Ղարաքեչիշյան**

Տղաս՝ Ղավիթը, մտավոր խնդիրներ ունի: Նա հաճախել է դպրոց, բայց տառաձանաչ չէ: Նրան տանում էի դպրոց միայն տանը մենակ չթողնելու համար: Դպրոցն ավարտելուց հետո մնաց տանը, զբաղվելու բան չունեի, ձանձրանում էր, ինչը վատ էր անդրադառնում թե՛ նրա և թե՛ ինձ վրա: Նա իրեն զգում էր հոգեպես ճնշված: Նրա հայացքում կարծես մշտապես կարդայվում էր՝ երանի՛ ձեզ: Ես ինձ զգում էի ամենադժբախտը:


Բայց ահա բացվեց «Հուլիսի կամուրջ» կազմակերպության երեխայի զարգացման կենտրոնը: Այն իր հետ հույս բերեց, լույս բացեց թե՛ հուսալքված մայրերի և թե՛ բազմաթիվ երեխաների սրտում: Սկզբում չէի ցանկանում ուղարկել, թվում էր, թե նա իրեն լավ չի զգա, կձնշվի, բայց տեսնելով ոգևորությունը՝ հանգստացա: Կենտրոնի մանկավարժների ջերմ և գրկաբաց ընդունելության շնորհիվ նա իրեն այնպեղ զգում է լրիվ ապահով:

Բոլորս գիտենք, որ այդպիսի երեխաների հոգեբանությունը տարբեր է հասակակիցներից, նրանք չփվում են միայն այն մարդկանց հետ, որոնք իրենց հետ վարվում են որպես լիարժեք մարդու:

Կենտրոնում տղաս սովորել է վզնոց, գոտի հյուսել, դրանք նույնիսկ վաճառքի է հանել և դրանով իրեն երջանիկ զգացել:

Կենտրոնն իր շուրջը համախմբեց ոչ միայն երեխաներին, այլև նրանց մայրերին, որոնցից յուրաքանչյուրն իրեն հուսալքված էր զգում: Շփվելով ու, ինչպես ասում են՝ դարդ դարդի տալով, կարծես մայրերն էլ գտան իրենց անկյունը, անկյուն, որտեղ հավաքվում են ծնողները և ոգևորվում իրենց երեխայի յուրաքանչյուր հաջողությամբ՝ զգալով նրանց առաջընթացը:

### **ԱՄԵՆ ԻՆՉ ԼՍՎ Է ԼԻՆԵԼՈՒ** **Լարիսա Գրիգորյան**



Ոչ ոք չգիտի, թե ինչ ճակատագիր է սպասում իրեն: Եվ ահա, ճակատագրի բերումով էլ մենք հայտնվեցինք այս իրավիճակում: Միակ որդիս՝ Գևորգը, հաշմանդամություն ունի: Շատ դժվար է համակերպվել այդ մտքի հետ: Ակամա փորձում ես պատճառներ և մեղավորներ փնտրել, բայց

միտքդ գնում է դեպի անվերջություն, առանց որոշակի լուծումների: Ոչ մի ծնող, ոչ մի մայր չի ցանկանա հաշմանդամ երեխա ունենալ, բայց դա ցանկությամբ չէ:

Տարիներ շարունակ ինձ միայնակ եմ զգացել, կաշ-

կանդված, հուսալքված: Ամաչել եմ շրջապատից, մարդկանց կարծիքներից:

Սակայն ամեն ինչ փոխվեց, երբ մեր դպրոցում իրականացվող ներառական կրթության համակարգը հնարավորություն տվեց իմ երեխային հաճախելու դպրոց:

Երբ Գևորգին դպրոց տարա, շրջապատի համար շատ անսովոր էր: Բոլորը նայում էին մեզ. ոմանք խղճում էին, ոմանք՝ ափսոսում: Շատ ծանր պահեր եմ ապրել, սակայն քիչ-քիչ զինվել եմ համբերությամբ:

Որդուս դպրոցում շատ ջերմ դիմավորեցին: Դպրոցի տնօրենը, ուսմասվարը և ուսուցչական կոլեկտիվը նախօրոք աշակերտներին նախապատրաստել էին որդուս դպրոցում ընդունելու համար: Գևորգի մուտքը դպրոց ջերմորեն ընդունվեց:

Սկզբում նա իրեն ազատ չէր զգում, կարծես վախենում էր բոլորից, բայց շուտով այդ ամենը հարթվեց:

Այժմ նա սովորում է Գավառի առաջին միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում:

Շրջապատի ջերմությունից որդիս ձեռք է բերել ինքնուրույնություն և ինքնավստահություն: Հիմա ես հասկանում եմ, որ ոչ մի ֆիզիկական խնդիր չի կարող կոտրել նրա ինքնավստահությունը: Բոլորը շատ ուշադիր են իմ որդու նկատմամբ, օգնում են նրան ամեն հարցում:

Որոշ ժամանակ անց շրջապատի համար տղայիս խնդիրը, նրա քայլակով տեղաշարժվելը դարձան սովորական և ընդունելի բոլորի կողմից:

Ես շատ ուրախ եմ, որ իմ որդին շատ ընկերներ է ձեռք բերել թե՛ դպրոցում և թե՛ այլ շրջապատում, ուր բոլորը նրան սիրում ու հարգում են:

Եվ երբ հանկարծ հուսահատության պահեր եմ ապրում, իմ ներքին ձայնն ինձ հուշում է.

- Մի՛ վախեցիր, ամեն ինչ լավ է լինելու:

Խմբագրումը և ձևավորումը՝ «Արևածաղիկ»  
մանկապատանեկան ամսաթերթի  
Տպագրված է «Զանգակ-97» տպարանում  
Տպաքանակը՝ 500 օրինակ